

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ե Ն Ս Ա Գ Ի Ր Ա Կ Ա Ն

ՔԼԷ ԳԵՐՄԱՆԱՅԻ ԱՍՏՈՒԱԾՍԱԲԱՆ ՎՕՐԴԱՊԵՏԻՆ

ՀԱՄՍՈՑՏ ՎՕՐԲՆ

Հենրիկոս Քլէ ծնաւ 1800ին ապրիլ 20ին Միւնսդէր-Մայֆէլտ պզտիկ քաղաքին մէջ, Գոպլենցա, քաղքին մօտ: Իրեն ծնողքն չափաւոր կենօք արուեստաւորք էին, որոնք նախ Մայֆէլտէն գնացին Անտէրնախ և անկէ՛ի Մակոնցա: Այս քաղաքին մէջ եկեղեցական վիճակը սկըսաւ. և ինն տարեկան՝ եպիսկոպոսական դպրանոցն մտաւ: Քիչ մը յետոյ ընկաւ այս դպրանոցն. վասն զի Նարոլէոն ամիոփեց և ջնջեց անոր ունեցած արտօնութիւնները, իրմէ նոր կանգնուած համալսարանին համար. որով և պատանին Քլէ ստիպուեցաւ որպէս զի յետ չմնայ իր ընթացքէն, կայսերական ճեմարանը յաճախել: Իրը ընկաւ աշխարհակալն և դպրանոցն իր աւաջին վիճակը գտաւ նորէն հօն դարձաւ Քլէ. տասնուհինգ տարեկան հասակին մէջ հօն ուսանելի բոլոր ուսմանց կարգն ալ լմնցուցեր էր. բայց կեցաւ հօն որպէս զի մեծ դպրանոցը մտնալու պահանջած հասակն ունենայ, որ 1817ին կատարեցաւ: Սովորութիւն էր որ փայլուն հանճարով աշակերտք՝ աստուածաբանութեան ընթացքն լմնցուցած՝ կրնային փոքր դպրանոցին խոնարհադոյն դասու մը ուսման վարժապետ ըլլալ, և կամաց կամաց կը հասնէին մեծ դպրանոցին բարձրագոյն ուսման մ՝ալ վարժապետութեան. Սակայն չը-

կան օրէնք հանճարոյ և ոչ իսկ Քլէի. որ դեռ աստուածաբանութեան երկու տարուան ընթացքը չկատարած՝ և 19 տարեկան հասակին մեծ վարժապետ կարգեցաւ փոքր դպրանոցին: Իրեն արդեամբք այն վարժարանին հին և ծղրած ուսման ոճերն նորոգուեցան, և ուսմունքն զիտութեան զարգացման համեմատ ձեռք մը և կարգի մէջ մտաւ: Տասը տարի այս պաշտօնը կատարեց. օրը 6 ժամ դպրանոցի տղոց համար կը ծախէր. յետոյ իր ուսման կը պարապէր. և շատ անգամ արշալոյսն զփլէ արթնութեան և ուսման զբաղմանց մէջ կը գտնէր. իրեն մտաց սնուցիչ և սիրելի ընթերցանութիւնք եկեղեցւոյ Հարքն էին. պարապելու և հանգչելու ժամեր չունէր, և դպրանոցին երիտասարդ վարժապետաց վրայ դրուած արգելալաւնաց կանոնն՝ միայն Քլէի էր սիրուն և սիրելի: 1821 սեպտեմբ 2. կիսասարկաւագ եղաւ. 1823 մայիս 2. սարկաւագ, և երկրորդ օրն քահանայ ձեռնադրեցաւ: Արդէն խոնարհադոյն ուսմանց վարժապետութեանէն ելեր էր (1822) և հետտորականին դասատու էր. 1825 սուրբ գրոց մեկնութեան և եկեղեցական պատմութեան վարժապետ դրուեցաւ. և երկրորդ տարին իմաստասիրութեան ամթողն ալ իրեն յանձնուեցաւ: Այնչափ զբաղանաց մէջ գրելու

ատեն ալ կ'ունենար . իր քննադատական ճառն Յաղագս ուսման հասցարաւոյն սոդաւոյն կախիկի դարձոց և վիճարանութիւնն զոր 'ի վիրցպուրկ յաղթանակաւ ըրաւ՝ 1825ին իրեն վարդապետական աստիճան բերին . 1827ին հրատարակեց իր Յաղագս խոստովանութեան ճառն , 1829 Յովնսկոնու աւետարանիկն հրաշալի մեկնուրքիւն , և երկրորդ տարի Հասկանայեցոց քրքոյն մեկնուրքիւն . աստուածաբանական օրագրին մէջն ալ շատ յօդուածներ զրաւ . երեւիի էր և քարոզութեամբ , թէ և յետոյ բողոքովին մէկզի թողուց :

Այս ամէն երկասիրութիւնք տարածեցին քիչի համբաւն , և սկսան գերմանական համալսարանք յափշտակել մէկմեկէ քիչէ : Գրիպուրկայ համալսարան քիչի առջևը դրաւ Հին և Նոր կտակարանաց մեկնութեան աթոռն , որուն վրայ կը նստէր այն ատեն մեծն Հուկ խիտ ծեր . փորձ փորձեցին տանել և 'ի Մոնազոյ , և Բրուսիոյ տէրութիւնն անոր ընտրութեան թողուց մին 'ի համալսարանաց Պրեսլաւիոյ կամ Պոննայի : Թէպէտ չնչին էր իր պաշտաման վարձքն՝ 200 տարևոր Ֆիլորին , և կրնար մեծամեծ վարձքերու յուսալ այն պաշտամանց զոր իրեն դիմացը կը դրնէին , սակայն շատ տատամնեցաւ իր հայրենիքը թողուլ : Վերջապէս շատ պատճառներ , յորոց մի էր և իր ծերացեալ և բազմակարօտ ծնօղաց օգնական ըլլան՝ ստիպեցին ստանձնել Բրուսիոյ տէրութեան առաջարկն և բնտրեց գլխամալսարանն Պոննայի քան զՊրեսլաւիոյ :

Այն ատենները նոյն համալսարանին մէջ շատ հզօր էր և կ'իշխէր իր ուսմամբ մեծահռչակն Հերմէս . այս աստուածաբանն՝ որուն վարդապետութիւնն այնչափ համբաւեցաւ 'ի Գերմանիա և շատ անգամ դասապարտեցաւ Ս . Գահէն , կը սովորեցնէր թէ ինչպէս ամէն գիտութեանց մէջ՝ նոյնպէս և աստուածաբանութեան մէջ ստոյգ բան մը չկայ ըստ ինքեան . թէ հեղինակութիւն

ըստ ինքեան մարդկային մտաց համուսնի դիմաց չի կրնար դրական բան մը դնել . և թէ համարտութիւն պէտք է խնդրել և քննել , և անկարելի է զայն հաւատսել՝ բայց ի թէ գործածութեամբ ուղիղ բանին : Այս սկզբունքներս որ կրնան ուղղափառական ըլլալ մինչև կէտ մը , հերմեսեան մտօք կը տապալեն կաթողիկէ եկեղեցոյ գրութիւնը և քրիստոնէական յայտնութեան անգամ հիմունքը կը խախտեն : Քիչ առաջարդէն այս խնդրոյս վրայօք իր միտքն յայտնած էր . որչափ Հերմէս հակառակ էր հեղինակութեան այնչափ ալ անոր ջերմ կողմնակից էր քիչ : Ընդդիմութիւնն տեսիլ դուրս ցատկեց 'ի Պոննա . թէ իր դասատուութիւնք և թէ իր գրուածքը այս նպատակին ծառայելու ուղղեցան : 1831ին տպագրեց իր Կրօնքիւն կարողիկէ վարդապետութեան . 1832ին Աստուածաբանական Համալսարանի տարիքիւն , դժուարագիտ զըրուածը , յորում ըստ կարգի առաջարկած և լուծուած են աստուածաբանութեան բովանդակիչ ամենայն գիտնական մասունք : Երբայեցոց քրքոյն բացատրութիւն և Յաղագս ամուսնուրքեան ճառն տպագրեցան 1833ին . վերջոյս տպագրութիւնն կրկնեցաւ 1835ին . 1834-5 կարողիկէ վարդապետական և 1837-8 վարդապետական Պատմութիւն հրատարակեցաւ : Հանդերձ նիւթոցն զանազանութեամբ , իր ամէն գրուածքն մէկ մէկ ամուր պատուար են և անուղղակի հերքումն հերմեսեան աղճատանաց :

Քիչի այս անյողգողք արիւթիւնն կորոյս անոր խաղաղութիւնը . և տառը տարի Պոննա անցընելու ատեն զրբի զաղտնի անդադար հալածանաց և յայտնի նեղութեանց համբերեց , և իր թշնամեաց չարաբուստ հնարքները քիչ մնաց պիտի վար առնէին զանիկայ իր վարդապետական աթոռն . բայց անոնց թշնամանաց և մեքենայից միայն համբերութեամբ և լուծեամբ դիմացաւ : Գոհ իր բազմաթիւ աշակերտաց ծափահարութեամբ , և հաճու

թեամբը, որով հասարակութիւնը հաճ
և հաւան ընդունէր իր գրուածքը, և մե-
ծարանօք՝ որով պատուէր յիմաստնոց՝
իր սկսած ճամբան առաջ կը սաննէր
խաղաղ հոգեով :

Այն ժամանակները յանկարծ աղե-
տայի երկպառակութիւն ընկաւ Բրու-
սիոյ և Ս . դահին մէջ՝ Գոլոնիոյ եպիս-
կոպոսին պատճառաւ : Ինչպէս ամե-
նուն ծանօթ է, կղէմէս Ա. դոստոս և
պիսկոպոս Գոլոնիոյ՝ բռնուեցաւ և բան-
տուեցան : Գլէ շատ մտերիմ էր այս ե-
կեղեցական անձին, ուսկից ալ քննիչ
գրուած էր. և 'ի բարեկամութենէ և 'ի
խղճէ ստիպուած՝ պարտք համարեց ա-
նոր դատը իր վրան առնուլ : Այս պատ-
ճառաւ շատ զօրացան Հերմեսեանք և
Գլէի փիճակն երթալով կը վատթարա-
նայր . միայնակ՝ շատերու գէմ, աւելի
սովորելու համար ծնած քոն գործելու,
խեղճ և խոնարհ անգործութեան մը
մէջ փակուած էր . բայց երբ Պաւարիոյ
տէրութիւնն առաջարկեց իրեն մեծին
Մէօհլէրի դատարկացած աթոռն, ջիշ
շատ տատամեցաւ նորէն՝ կարծելով
թէ անձամբ կենալով 'ի Պոննա՝ թերևս
բան մը յաջողցնէ . բայց իմանալով որ
իր ամէն ջանք և վաստակք միայնակ
են և անբարեկան՝ ուստի և անօգուտ,
և թէ կարելի է դեռ լաւագոյն կերպով
գործածել ուրիշ տեղ իր գործնէնու-
թիւնը, յանձն առաւ առաջարկութիւնը
և 1839ին աշնան գնաց 'ի Մոնագոյ :
Շատ սիրով և ծափահարութեամբ ընդ-
ունեցութիւն գտաւ, անհամար ունին,
գիրներ ունէր և արդէն Գլէն Պաւա-
րիոյ և Գեյրմանիոյ վարդապետ մը հա-
մարտէր : Բայց մինչդեռ անչափ դրա-
ւոր վաստակաց անգամ և մեծամեծ
վշտաց մէջ կորովի առողջութիւն մը կը
վայլէր, մէկէն Մոնագոյի նոր և վա-
տառող կլիմային ազդեցութիւններէն
յաղթուեցաւ : 1840ին յուլիս ամսայն
բռնուեցաւ հարբոխածին յերմէ մը՝ որ
քանի մը օրէն փարատուած կարծուե-
ցաւ . բայց նորէն զայրանալով և ջրա-
յին հիւանդութեան փոխուելով՝ վեր-
ջուց անոր կեանքը 40 տարեկան ծա-

ղիկ հասակին մէջ նոյն ամսոյն 28ին .
լացին զինքն իր աշակերտքն և բարե-
կամք և ամենէն աւելի իր ալեգարդ
ծնօղքն : Միշտ վառուած էր անոնց սի-
րովը . անոնց պարենիկը կը ճարէր և
պարապոյ օրերն անոնց քովն անցընել
կը սիրէր :

Անտարակոյս արդի Գերմանիոյ մե-
ծահանճար ուղղափառ աստուածաբա-
նից մէկն է Գլէ . և իրաւամբ Գերմա-
նացիք Մէօհլէրի կը համադասեն զինքը .
տակայն էական տարբերութիւնք կան
երկու հանճարներուն մէջ : Մէօհլէր հա-
րուստ ծնօղաց զուակ, խնամքով դաս-
տիարակուած ճանապարհորդութեամբ
ծիրանաւորներու և պալատականերու
հետ կեցողավարելով ընտասուն կերպ
մը առած էր և զգեցած էր նուրբ քաղա-
քավարութեան ամէն ձևերը, որոնք ան-
ցան և իր յղկուն յարգարուն գրութեան
կերպին մէջն ալ, և իր մտածմունքներն
յատակ և որոշ որոշ դուրս ցատկեցու-
ցին : Գլէ ազքատի զուակ, 'ի մանկու-
թենէ դժբոցի մէջ և գրեթէ վանական
կարգով դաստիարակուած՝ կրօնաւորի
կերպ մ՝ առեր էր . իր միակ զբաղ-
մունքն էր իր վարդապետական աթո-
ռին վրայէն սենեակը երթալ, աշակեր-
տաց դաս տալէն գիրքերը կարդալու
երթալ : Պշտիկ զրօսանքի մը և զուար-
ճութեան կարօտութիւն անծանօթ էր
իր քովն . Մոնագոյ երթալէն առաջ՝ իր
երկայնագոյն ճամբորդութիւնն Պոննա
յէն Մակոնցա երթալն եղաւ : Բնու-
թեամբ հեզահոգի, բարուքն զուարթ,
խօսելու ատեն պերճ և վայելուչ . բայց
չունէր այն զարդն որ ընկերութեան
չնորհք է . անփորձ էր աշխարհքի բանե-
րու մէջ . անոր համար խօսելու կերպն
խիստ էր . Տիղդ և խիտ նոր նոր գալա-
փարներով և ոճերով և շատ ուսումնա-
կան ձևերով, կը բացատրէր իր մտածու-
թիւններն խիստ գեր 'ի վերոյ գիտնա-
կան ճշգրութեամբ մը և ազդու դարձու-
ածներով . բայց գեղեցկին կարտո են և
շատ համուսուտ . և զանոնք կարդալու
համար հմուտ և ուշի ուշով քննող միտք
պէսք է : Չունի ոչ Մէօհլէրի բնածին

Պրնա Դ .

հանճարն, ոչ անոր գաղափարաց նորու-
 թիւնը, ոչ անոր հանճարաւատ տրամա-
 բանութիւնը, և ոչ անոր շատ և մեծա-
 մեծ խնդիրներ մէկ տեղ բերելու և վա-
 յելուց և վառվառն հոգւով բացատրե-
 լու ճարտարութիւնը. սակայն աւելի հը-
 մուտ է և 'ի խորս աստուածաբանութե-
 թափանցող ըստ ամենայն մասանց, ա-
 ւելի լեզուադէտ էր փյէ. և գիտութիւնն
 շատ կարգաւորեալ էր և ճիշդ. Մէօհլէր
 չափով կը դործածէ հմտութիւնն, փյէ
 կը սիրէ շքեղանալ հմտութեամբ. Մէօհ-
 լէր բամբասուեցաւ (և թերևս իրա-
 ւամբ) թէ է հակամէտ և խորհրդական
 (mistique) գաղափարաց, և իրուցընէ իր
 բոլոր պայացոյններն տեղ տեղ շատ հայե-
 ցողականք են և վերացեալ. ուր փյէ ուղ-
 զակի խնդրոյն վրայ կը կենայ, տեսա-
 կանը չարհամարհեր, բայց վերացեալ
 գետութիւնն ալ փյէի համար մեծ հա-
 ւաստիք է դրականին: Մէօհլէր բա-
 ւական սեպեց կուռել բողոքականու-
 թեան հետ և անոր բուն հիմանց վրայ
 ուղղել իր զէնքերն, և յաղթանակաւ և
 հանդիսապէս դուրս ցատկեցընել ուղ-
 զափառ եկեղեցւոյ դրութիւնը. բայց
 փյէ իր գիտած նպակակին մէջ կը պա-
 րունակէ ուղղափառ աստուածաբանու-
 թիւնը լրիւ իւրով, կը բացայայտէ անոր
 դրութիւնն իր առանձին առանձին մա-
 սանց մէջ, և կը ջանայ հիմնել զանոնք
 պարզ՝ բայց զօրաւոր սկզբանց վրայ:
 Միով բանիւ Մէօհլէրի գրուածքն շատ
 ախորժով կը կարդացուին, որովհետև
 զեղեցիկ ոճով գրուած են, և լի են նոր
 կամ նորակերպ տեսութեամբք. բայց
 փյէի գրուածքը խորիմաստ են և հրա-
 հանգիչ աստուածաբանին: Բայց 'ի աս-
 տուածաբանութեանէն, որ պէտք է ընդ-
 արձակ մտքը հասկընալ ինչպէս որ
 ցերմանացիք կը հասկընան, հմուտ էր
 նաև իմաստասիրութեան, պատմու-
 թեան և լեզուաց մէջ. շատ տեղեակ
 էր լատին, յոյն և երբայական լեզուաց,
 գիտէր և արդէ գլխաւոր լեզուներ,
 զաղլիական, անգլիական, իտալացին.
 կարգէ դուրս յիշողութիւն մ'ալ ունէր.
 կարգացած էր որչափ կարելի էր կար-

դալ, բայց աւելի հին հարց և միջնա-
 դարեան եկեղեցական մատենագրաց
 գիրքերը կարգաւոր կը պարապէր. իր
 կենաց կարճութեան համեմատ շատ
 գրեց. և իր ամէն գրուածոց մէջ զար-
 մանալի հմտութիւն մը կը փայլի: Իր
 մեկնուղականք շատ յարդի են, և ուղ-
 զափառաց օգնեցին այս գիտութիւնս
 իրենց մէջն զարգացընելու. Ս. Յովնաւ-
 նու Աւետարանի մեկնուրբանը լի է
 գեղեցիկ գեղեցիկ ստուգաբանական և
 աստուածաբանական գիտողութիւննե-
 րով, և ուղղափառ գրչի մը յաջողեալ
 ձեռնարկ. բայց իր գլուխ գործոցն է
 Ուղղափառ վարդապետականն, տպագ-
 րուած 1834-35 եռահատորութեամբ:
 1840ին կրկին տպագրուեցաւ. երկու
 հատոր լմնցած էր և երրորդն սկսած
 երբ մահը վրան հասաւ: Այս գրուածը
 ուղղափառ աստուածաբանութեան ան-
 թերի պիտնական գրութիւնը կը պա-
 րունակէ: Հեղինակն բաւական չիտեպեր
 մէջ տեղ բերել և ընդհանուր կերպով
 եկեղեցւոյ վարդապետութիւնը հա-
 տասել և զատ զատ անոր մասերը, այլ
 երեսին վարի կողմը կը դնէ հին և նոր
 վարդապետաց և աստուածաբանից վը-
 կայութիւններ, որոնք վճարգապետու-
 թիւնը կը հաստատեն: Խնդիրներ և նիւ-
 թեր մէջ տեղ կը բերուին և կը ճառուին
 զեղեցիկ կարգաւ, համառօտիւ, խորու-
 թեամբ և գիտութեամբ: Թերևս չա-
 փազանց ըլլան բաժանմունքներ և ստո-
 բաբաժանմունքներ, սակայն այն ալ
 օգուտ է յիշողութեան, և կը զիւրին-
 ցընեն խնդրոց և անոնց իմաստից լու-
 ծումը: Վարդապետութեանց պատմ-
 մուրիւնն յետոյ հրատարակուեցաւ.
 Թէպէտ առանձին գրուած է, սակայն
 յաւելուած մը համարելու է առաջնոյն
 վարդապետութեանց պատմութիւնն
 աստուածաբանական գիտութեան տե-
 սակ մ'է նոր մտած Գերմանիոյ համա-
 լսարաններու մէջ. բողոքականք եղան
 գիտութեանս առաջին ստեղծիչ, որ թէ-
 պետ չարափառ ծագումն ունեցաւ,
 սակայն չուտով մը կարևոր ճանչցան
 անոր շահը նաև ուղղափառ համայնա-

րանք . բայց ոչ որ մտածեր էր գոնէ առ ձեռն բան մը շինել . միայն ֆլէի ան . դու ուսումնական ջանք և ծանօթութիւնը կրցան լեցնել այս պակտութիւնս . թերևս համառօտ և խրթին բացատրուած է քիչ մը . սակայն եկեղեցւոյ վարդապետութիւնները վարդապետաց աստուածաբանից , իմաստասիրաց , ազանդաւորաց միտքը և կարծիքը խիստ ճշդիւ , և որչափ կարելի է , անոնց բաւերով և բացատրութիւններով մէջ տեղ կը բերուին : Ուստի այս գիրքս շատ յարգի է և կարևոր աստուածաբանութեան և իմաստասիրութեան ուսման , և կրնայ կուրիւ կրկնութիւն այն ամէն կարծեաց որ մարդկային իմացութենէն հոգևոր մեծամեծ խընդրոց վրայ փայլատակեցին , և կամ իբրև շառաւիղք կեղորոնին՝ ելան եկեղեցւոյ ծոցէն ՚ի նոյն դառնալու մտօք , կամ շեղեցան անկէ ժամանակաւոր խոտորում մը ձևացընելու համար , կամ ա՛նոր չորս կողմը պրտտեցան , ինչպէս հաստատուն կէտի մը գիծը : Համառօտ գրքոյկ մ'է վարդապետութեամբ և օգ-

տաչահութեամբ պատարուն , առաջին պատմութիւնն է վարդապետութեանց ուղղափառ գրչէ երկասիրած : Քլէի վերջին գրուածն է Գրոշքիւն քարոյսկան աստուածաբանութեան , իրմէ սկըսած տպագրուիլ և իր մահուանէն վերջը կատարուեցաւ : Պոննայի համալսարանի մէջ տուած դասերուն գրուածն է , որով դէմ դրաւ բարոյական աստուածաբանութեան նոր դրութեան՝ զոր Հերմեսեանք հնարեցին : Շատ գեղեցիկ գրուած է , նոր նոր և հանճարեղ դիտողութիւններով լեցուն , տարբեր ամենեկն ձանձրացուցիչ դիպուածալոյծ (casuistique) դրութենէն , որ իբրև բարոյական վարդապետութիւն դեռ տեղ տեղ կը սորվեցընեն : Իրաւի մեծին Հիրշերի Բարոյական աստուածաբանութեան բնականութիւնը և փափուկ պերճութիւնը չունի , որ այնչափ հոչակեալ է ՚ի Գերմանիա , բայց այնպէս հոգեմուլ (spiritualistique) չէ և ոչ վերացեալ սկզբանց վրայ հիմնուած . ուստի դիւրագործածելի ալ է թէ վարդապետական և թէ դործնական մասին մէջ :

ՏԻՒԲԱՆԼՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՌԼԷԱՆԻ

Գաղղիոյ արգի եպիսկոպոսաց մէջ Գեր . Տիրանյուռ անտարակոյս ամենէն հոչակաւորն է . իբրև պերճաբոս , մատենագիր , աստուածաբան , ջատագով հաւատոց և գիտութեանց , պատուականագոյն ձերբեր կը ներկայացընէ իրեն անձին վրայ : Պոսիւէէն ետքը՝ Գաղղիացի եկեղեցական առաջնորդներէն քիչերն եղան որ այսքան գեղեցիկ և այսքան իրաւամբ արժանացած համբաւ մը ստանան :

Իրեն եպիսկոպոսութիւնն ընդհանուր ծանօթ ըլլալով , հոս միայն աւելի քահանայական կենացը գործոց վրայ խօսիւնք :

Ե՛նա ՚ի Սաւլոյա 1802 , որ ան տտեն Բիէմնդի գաւառ էր , և բուն գաղղիական ազգայնութիւնն ընդունեցաւ 1833ին : Ազգականներուն մէկուն խորհրդովը Բարիզ եկաւ , և սկզբնական ուսմունքն Ռիկար (Regard) ըսուած փողոցի՝ առանձին դաստիարակութեան տան մը մէջ ընելէն ետքը՝ մըտաւ Շարտոնէ Ս . Նիկողայոսի ուսումնարանը , ուր նշանաւոր եղաւ ուսմանց անխոնջ ջանասիրութեամբը :

Գեղեցիկ դպրութեանց ուսման ընթացքը (humanité) կատարելէն վերջը , մտաւ Ս . Սուլպիկիոսի կղերիկոսարանը՝ փիլիսոփայութեան և աստուածաբան